ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ք. Երևան, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

(վարչական բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու և բողոքը մերժելու մասին)

Ք. ԵՐԵՎԱՆ **«15» ապրիլի 2016թ.**

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ ի դեմս ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի, ուսումնասիրելով անհատ ձեռնարկատեր Էդվարդ Հովհաննիսյանի դիմումը՝ վարչական բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու և 15.02.2015թ.-ի բողոքը վարույթ ընդունելու մասին և ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 15.12.2015թ.-ի թիվ 54/2 որոշման դեմ ներկայացված անհատ ձեռնարկատեր Էդվարդ Հովհաննիսյանի բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Դիմումի և բողոքի էությունը, ներկայացված պահանջները և հիմքերը.

Անհատ ձեռնարկատեր Էդվարդ Հովհաննիսյանը (այսուհետ՝ Դիմումատու) 25.02.2016թ. դիմում է ներկայացրել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանին (դիմումը մուտքագրվել է 29.02.2016թ.-ին 150-5296 համարով), որով հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Գանգատարկման հանձնաժողով) 2015թ. դեկտեմբերի 15-ին որոշում է կայացրել ՀՀ Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության դեմ ներկայացված իր բողոքը մերժելու մասին:

Ըստ Դիմումատուի, Գանգատարկման հանձնաժողովի վերոհիշյալ որոշումը բողոքարկելու նպատակով 15.02.2015թ. փոստային ծառայության միջոցով բողոք է ուղարկել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ծրարի վրա նշելով «ք. Երևան, Կառավարական տուն 1» հասցեն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 311-Ն որոշմամբ սահմանված Հանձնաժողովի աշխատակարգի 4-րդ կետը, համաձայն որի՝ Հանձնաժողովի նիստերն անցկացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի վարչական շենքում: Նշված նամակն իրեն է վերադարձվել ծրարի վրա «անհայտ է» նշումով:

Վերոգրյալի արդյունքում Դիմումատուն խնդրել է իր կողմից բողոք ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետի բացթողումը համարել հարգելի և Գանգատարկման հանձնաժողովի 15.12.2015թ. թիվ 54/2 որոշման դեմ 15.02.2016թ. ներկայացված բողոքն ընդունել վարույթ:

Գանգատարկման հանձնաժողովի 15.12.2015թ. թիվ 54/2 որոշման դեմ 15.02.2016թ. ներկայացված բողոքով Դիմումատուն հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության պետի կողմից 03.09.2015թ. տրված թիվ 6104898 հանձնարարագրի հիման վրա Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանի մոտ իրականացվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Ստուգման արդյունքներով հարկային մարմնի կողմից կազմվել է 02.10.2015թ. թիվ 6104898 ակտը, որի համաձայն Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանից գանձման է ենթակա 765.000 ՀՀ դրամ գումար: ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության 26.10.2015թ. թիվ 297436/05 որոշմամբ ՀՀ վարչական իրավախախտումներ մասին օրենսգրքի 169^1 հոդվածի 1-ին մասի հիմքով Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ 25.000 ՀՀ դրամի չափով:

Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանը 12.11.2015թ.-ին բողոք է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողովին՝ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության 02.10.2015թ. թիվ 6104898 և ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության 26.10.2015թ. թիվ 297436/05 որոշումների դեմ: Գանգատարկման հանձնաժողովը 15.12.2015թ.-ին կայացրել է թիվ 54/2 որոշումը, որով բողոքը մերժվել է և ՀՀ ՖՆ Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության 02.10.2015թ. թիվ 6104898 և ՀՀ

ՖՆ իրավաբանական վարչության 26.10.2015թ. թիվ 297436/05 որոշումները թողնվել են անփոփոխ:

Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանը 12.11.2015թ.-ին բողոք է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողովին՝ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության 02.10.2015թ. թիվ 6104898 ստուգման ակտի և ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության 26.10.2015թ. թիվ 297436/05 որոշման դեմ: **Որպես բողոքի հիմքեր նշվել են՝**

ա. հարկային մարմնի աշխատակիցները դուրս են եկել հանձնարարագրով նշված ստուգման շրջանակներից, քանի որ դրանում նշված է եղել միայն ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որի շրջանակներում չպետք է հանվեր Z հաշվետվություն և ուսումնասիրվեր. Արդյունքում խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի պահանջները:

Վերոհիշյալ խախտման արդյունքում պետք է կիրառվի Օրենքի 18-րդ հոդվածը, համաձայն որի՝ հարկերի հաշվարկման հսկողության և գանձման ընթացքում օրենքի խախտմամբ հարկ վճարողների վերաբերյալ ձեռքբերված տեղեկությունները չեն կարող հիմք հանդիսանալ հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման համար:

բ. Էդվարդ Հովհաննիսյանի կողմից հայտարարությունը 19.08.2015թ. ուղարկելը թյուրիմացություն է, քանի որ Դիմումատուն կարծել է, որ օրենքի խախտում չի կատարում այն պատճառով, որ պատշաճ նշել է հարկման ժամանակահատվածը՝ 01.08.2015թ. – 31.08.2015թ., թեպետ հարկային մարմնի կողմից կազմված էլեկտրոնային տարբերակում որպես գործունեության իրականացման սկիզբ նշված է 19.08.2015թ.: Բացի այդ, արտոնագրային վճարը կատարել է մինչև օգոստոս ամիսը՝ 31.07.2015թ.-ին, այսինքն ակնհայտ է եղել տնտեսավարող սուբյեկտի՝ 2015թ. օգոստոս ամսին արտոնագրային վճար վճարող համարվելու պատրաստակամությունը:

գ. Էդվարդ Հովհաննիսյանը գործել է որպես արտոնագրային վճար վճարող, իրականացրել է նույն գործունեությունը ինչ 2015թ. հուլիս ամսին, իր կողմից թույլ տրված խախտման մասին հարկային մարմնից որևէ ցուցում կամ նկատառում չի ստացել:

դ. խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի պահանջը, որն արգելում է վարչական մարմնին վարչարարություն իրականացնելիս միայն ձևական պահանջների պահպանման նկատառումով ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային կատարված են:

ե. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հավելվածում ամրագրված է ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները հարկային մարմնին փոստի միջոցով ներկայացնելու կարգը: Նշված կարգի 7-րդ կետը սահմանում է հաշվետվություններում պարտադիր լրացման ենթակա տվյալները, որի 3-րդ ենթակետը որպես պարտադիր լրացման տվյալ սահմանում է հաշվետու ժամանակաշրջանը, որի համար ներկայացվում է հաշվետվությունը, իսկ 8-րդ կետը սահմանում է, որ պարտադիր լրացման տվյալներից որևէ մեկի հաշվետվությունում բացակայության, ……….. դեպքում, հաշվետվությունը համարվում է չներկայացված, և հարկային մարմնի կողմից այդ հաշվետվությունը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան լիազորություններ ունեցող հարկային մարմնի պաշտոնատար անձի գրությամբ դրա մասին փոստով տեղեկացվում է հարկ վճարողին:

Վերոգրյալից, ըստ Դիմումատուի, հետևում է, որ հարկային մարմինը հիմնվելով միայն Է. Հովհաննիսյանի հայտարարության ուղարկման օրվա վրա, հարկ չի համարել ստուգել հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ գրառումը: Արդյունքում, հարկ վճարողը որևէ կերպ տեղեկացված չի եղել, որ իր ուղարկած փաստաթուղթը ձևական առումով չի համապատասխանում սահմանված կարգին, և կամ էլ դրանում, առանց իրեն տեղյակ պահելու փոփոխություն է կատարվել: Արդյունքում, որևէ փաստաթուղթ առկա չէ այն առումով, որ Դիմումատուի ուղարկած փաստաթղթերը համարվել են չներկայացված:

զ. ստուգման ակտի նախագիծը Դիմումատուն ստացել է 25.09.2015թ.-ին: Քանի որ օրենքով տնտեսավարող սուբյեկտին տրված է 5 աշխատանքային օր՝ դիտողություններ և առարկություններ ներկայացնելու համար, հարկային մարմինը հաշվի առնելով այն հանգամանքը, որ առարկությունները փոստով ուղարկված

լինելու պարագայում կարող էին ստացվել ավելի ուշ, քան 5-օրյա ժամկետն է, պետք է ժամանակ տրամադրեր. իր կողմից առարկությունները փոստի միջոցով ուղարկվել են 28.09.2015թ.-ին, իսկ հարկային մարմինն այն ստացել է 02.10.2015թ.-ին և հենց նույն օրն էլ ընդունել է ստուգման ակտը: Հարկային մարմնի աշխատակիցների կողմից կատարվել է ձեռքով գրառում, որը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ինքը նախագիծը ստացել է փոստով:

է. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ստուգումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով: Դրանից հետևում է, որ հարկային մարմինը վարչական վարույթ չի հրավիրել՝ ներառյալ իր անմիջական դիմումի հիման վրա, որի արդյունքում թույլ է տվել անգործություն:

Հանձնաժողովին ուղղված բողոքով բացի վերոհիշյալ փաստարկներից, Դիմումատուն որպես բողոքի հիմնավորում նշել է նաև, որ Գանգատարկման հանձնաժողովը որևէ կերպ չի անդրադարձել այն փաստերին, որ՝

- հարկային մարմնի աշխատակիցները ձեռքով ավելացրել են տեղեկատվություն այն մասին, որ Ակտի նախագիծը ներկայացվել է տնտեսավարող սուբյեկտին՝ ծանոթանալու և ստորագրելու, սակայն վերջինս հրաժարվել է ակտին ծանոթանալուց և այն ստորագրելուց՝ չնշելով շարժառիթները, որպիսի հանգամանքը, ըստ Դիմումատուի, չի համապատասխանում իրականությանը, քանի որ ինքն ակտի նախագիծը ստացել է փոստով, հետևաբար չէր կարող հրաժարվել այն ստորագրելուց:

- Ակտի նախագծի վերաբերյալ Դիմումատուի առարկությունները հարկային մարմինն ստացել է 02.10.2015թ.-ին և հենց նույն օրն էլ ընդունել է ստուգման ակտը՝ առանց իր կողմից պահանջված վարչական վարույթն իրականացնելու:

- հարկային մարմինն իր մոտ իրականացրել է ձևական ստուգում՝ նախապես նկատի ունենալով հետագայում ակտով ամրագրված հարկային իրավախախտումը: Վերոգրյալը բխում է այն հանգամանքից, որ ստուգաթերթի մեջ նշված է եղել այլ նպատակ:

Արդյունքում, Դիմումատուն խնդրել է՝

ա. բեկանել ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 15.12.2015թ.-ի թիվ 54/2 որոշումը.

բ. ոչ իրավաչափ ճանաչել հարկային տեսուչներ Արմեն Սաֆարյանի, Մանվել Ստեփանյանի և Գրիգոր Սահակյանի գործողությունները.

գ. ոչ իրավաչափ ճանաչել Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության պետ Ռ. Գևորգյանի անգործությունը.

դ. չեղյալ համարել ՀՀ ֆինանսների նախարարության Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության թիվ 6104898 ակտը.

ե. չեղյալ համարել ստուգման ակտի հիմքով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության 26.10.2015թ. թիվ 297436/05 որոշումը՝ վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

2. Մասնակցի դիրքորոշումը.

Հանձնաժողովը 2016թ.-ի ապրիլի 15-ին իրականացրել է լսումներ, որին մասնակցել է Դիմումատու Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանը:

Վերջինս լսումների ժամանակ պնդեց իր կողմից ներկայացված բողոքը և հայտնեց, որ իր կողմից հայտարարության ներկայացման ուշացումը թույլ է տրվել թյուրիմացաբար՝ կարծելով, թե նշվածը վճարվում է հարկային այլ հաշվետվությունների ներկայացման հետ զուգահեռաբար: Ընդ որում, եթե իր մոտ առկա լիներ արտոնագրային վճարից խուսափելու միտում, ապա տվյալ ամսին չէր տպի ՀԴՄ կտրոններ:

3. Դիմումի և բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Դիմումատուի և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն դիմումի և բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

- Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանի կողմից, որպես վարչական բողոքը Հանձնաժողովին ներկայացնելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմնավորում, 25.02.2016 թվականին Հանձնաժողովին ուղարկված և ՀՀ կառավարություն մուտքագրված դիմումին կից, ներկայացվել է վարչական բողոքը 15.02.2016 թվականին Հանձնաժողովին «ք. Երևան, Կառավարական տուն 1» հասցեով ուղարկելու մասին Հայփոստի կողմից հետադարձ ծանուցումը հավաստող

փաստաթուղթ և ծրար՝ որոնց վրա առկա կնիքների և գրառումների համաձայն, հասցեատեր է հանդիսացել Հանձնաժողովը, իսկ ուղարկման ժամկետ նշված է 15.02.2016թ.-ը: Ծրարը վերադարձվել է «անհայտ» նշումով: Վերադարձման թերթիկի վրա որպես վերադարձման ժամկետ նշված է 22.02.2016թ.-ը:

- ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետին 17.08.2015թ. ուղղված զեկուցագրով հարկային հսկողության բաժնի 1-ին կարգի մասնագետ Գրիգոր Սահակյանը հայտնել է, որ արտաքին դիտարկումներով պարզվել է, որ Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանը գործունեություն է իրականացնում ք. Ջերմուկում՝ հանրային սննդի բնագավառում, որի համար 2015թ. օգոստոս ամսվա համար չունի համապատասխան արտոնագիր:

- ՀՀ ֆինանսների նախարարության Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության պետի կողմից 03.09.2015թ. տրված թիվ 6104898 հանձնարարագրով հանձնարարվել է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ հարկային հսկողության բաժնի հարկային տեսուչներ Արմեն Սաֆարյանին, Մանվել Ստեփանյանին և 1-ին կարգի մասնագետ Գրիգոր Սահակյանին Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանի մոտ իրականացնել օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում՝ 01.04.2012թ. մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակահատվածի համար: Որպես ստուգման ժամկետ սահմանվել է մինչև 10 աշխատանքային օր:

- առկա է 07.09.2015թ. Էդվարդ Հովհաննիսյանի կողմից ստորագրված փաստաթուղթ, համաձայն որի՝ վերջինս ծանոթացել է հանձնարարագրին և ստացել է դրա մեկ օրինակը, ինչպես նաև ներկայացվել են ստուգվողի իրավունքներն ու պարտականությունները:

- 07.09.2015թ. ստուգողները Է. Հովհաննիսյանի մասնակցությամբ կազմել են արձանագրություն, համաձայն որի՝ Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանը գործունեություն է իրականացնում ք. Ջերմուկում՝ 96 ք.մ. սպասարկման մակերես ունեցող տարածքում հանրային սննդի բնագավառում, և 2015թ. սեպտեմբեր ամսվա համար ունի թիվ 25/7310815004749 արտոնագիրը: Ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ Է. Հովհաննիսյանը նշված վայրում գործունեությունը սկսել է 07.07.2015թ.-ից: Ըստ ՀԴՄ-ից դուրս բերված ֆիսկալային հաշվետվության, 01.08.2015թ. – 18.08.2015թ. ընկած ժամանակահատվածում Ա/Ձ-ի շրջանառությունը կազմել է 4.581.144 դրամ, սակայն

օգոստոս ամսվա համար համապատասխան արտոնագիրը հայտարարագրվել է 19.08.2015թ.-ին:

- Ստուգման արդյունքներով հարկային մարմնի կողմից կազմվել է 02.10.2015թ. թիվ 6104898 ակտը, որի համաձայն, Ա/Ձ Է. Հովհաննիսյանը 2015թ. օգոստոսի 01-ից մինչև 19-ը խախտելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները, առանց համապատասխան արտոնագրի իրականացրել է հանրային սննդի կազմակերպման գործունեություն՝ 96 ք.մ. սպասարկման մակերես ունեցող տարածքում (հիմք՝ Z հաշվետվությամբ արտացոլված հասույթը կազմել է 4.581.144 դրամ): Արդյունքում Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանից գանձման է ենթակա 765.000 ՀՀ դրամ գումար (127.500 x 3 ամիս x 2 հաշվարկով):

Ակտի վերջում առկա է ձեռագիր նշում հետևյալ բովանդակությամբ. ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, կազմված ակտը եռօրյա ժամկետում ներկայացվեց տնտեսավարող սուբյեկտին՝ ծանոթանալու և ստորագրելու: Վերջինս հրաժարվեց ակտին ծանոթանալուց և այն ստորագրելուց՝ չնշելով պատճառները»:

- Փոստային ծանուցագրերի համաձայն, Էդվարդ Հովհաննիսյանը ստուգման ակտի նախագիծը ստացել է 25.09.2015թ.-ին, իսկ ստուգման ակտը՝ 06.10.2015 թ.-ին:

- 19.08.2015թ. Ա/Ձ Է. Հովհաննիսյանը հայտարարություն է ներկայացրել Եղեգնաձորի ՏՀՏ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին, որում ժամկետը նշված է 1 ամիս, գումարը՝ 127.500 դրամ, գործունեության ժամանակահատվածը՝ 01.08.2015թ.-ից մինչև 31.08.2015թ., որում սակայն «01» թիվը ակնհայտ կերպով ջնջված է և փոփոխված:

- վճարման թիվ 150731015126049 անդորրագրի համաձայն, Էդվարդ Հովհաննիսյանը 31.07.2015թ. կատարել է 127.000 ՀՀ դրամի վճարում, որում որպես վճարման նպատակ նշված է. «հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար»:

- 19.08.2015թ. թիվ 25/270815004682 արտոնագրի համաձայն, Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանը հանդիսանում է արտոնագրային վճար վճարող՝ հանրային սննդի

ոլորտում իրականացվող գործունեության համար, իսկ որպես ելակետային տվյալ նշված է 96 ք.մ:

- 28.09.2015թ.-ին Է. Հովհաննիսյանը դիմում է ներկայացրել ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետին՝ վարչական վարույթ հրավիրելու, ներկայացված ակտի նախագիծը և ստուգողների վարքագիծը քննարկելու վերաբերյալ: Ըստ փոստային ծանուցման անդորրագրի, նշված դիմումը հարկային մարմինը ստացել է 02.10.2015թ.-ին:

- ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության 26.10.2015թ. թիվ 297436/05 որոշմամբ ՀՀ վարչական իրավախախտումներ մասին օրենսգրքի 169[1] հոդվածի 1-ին մասի հիմքով Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ 25.000 ՀՀ դրամի չափով:

- Ա/Ձ Էդվարդ Հովհաննիսյանը 12.11.2015թ.-ին բողոք է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողովին՝ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության 02.10.2015թ. թիվ 6104898 ստուգման ակտի և ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության 26.10.2015թ. թիվ 297436/05 որոշման դեմ:

- Գանգատարկման հանձնաժողովը 15.12.2015թ.-ին կայացրել է թիվ 54/2 որոշումը, որով բողոքը մերժվել է՝ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության 02.10.2015թ. թիվ 6104898 ստուգման ակտը և ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության 26.10.2015թ. թիվ 297436/05 որոշումը թողնվել են անփոփոխ: Ընդ որում, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության 26.10.2015թ. թիվ 297436/05 որոշումը Գանգատարկման հանձնաժողովը քննության չի առել այն հիմքով, որ բողոքը այդ մասով բերվել է ՀՀ վարչական իրավախախտումների օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Դիմումի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ բողոք ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու, բաց թողնված ժամկետը վերականգնելու և Գանգատարկման հանձնաժողովի 15.12.2015թ. թիվ 54/2 որոշման դեմ 15.02.2016թ. ներկայացված բողոքը վարույթ ընդունելու Դիմումատուի խնդրանքը ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը ստեղծվում է տեսչական մարմինների և դրանց ծառայողների գործողությունների կամ անգործության (այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի) դեմ բերված բողոքների քննության և լուծման նպատակով: **<u>Բողոքարկման հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնում է՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով</u>**:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 69-րդ հոդվածի համաձայն, անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ):

Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում: **Նույն հոդվածի 2-րդ մասի** համաձայն, սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետները բաց թողնելուց հետո ակտը դառնում է անբողոքարկելի: Բողոքարկման ժամկետը կարող է վերականգնվել հարգելի պատճառով բաց թողնվելու դեպքում: Բողոքարկման ժամկետի բաց թողնելը հարգելի համարելու հանգամանք կարող է դառնալ վարույթի մասնակցից անկախ պատճառներով բողոքարկման ժամկետը բաց թողնելը: ***<u>Բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառներ) վերացնելուց հետո վարույթի մասնակիցը կարող է բողոք ներկայացնել 15 օրվա ընթացքում՝ նշելով ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառներ)</u>:*** Վարչական մարմինը, որի վարույթում է գտնվում վարչական բողոքը, վերականգնում է բաց թողնված ժամկետը և բողոքն ըստ էության քննարկում և լուծում է, եթե բողոքով կամ բողոքի քննարկման ընթացքում հիմնավորվում է բողոք բերողից անկախ պատճառներով (նրա մեղքի բացակայությամբ) բողոքարկման ժամկետը բաց թողնելու հանգամանքը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Նույն օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի

համաձայն, մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված:

Սույն գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ Դիմումատուն ձեռնարկել է անհրաժեշտ միջոցներ օրենքով սահմանված երկամսյա ժամկետում Հանձնաժողովին բողոքը ներկայացնելու համար, որը սակայն վարչական մարմնին չի հասել իրենից անկախ պատճառներով: Ընդ որում, այդ մասին ծանուցումը ստանալուց հետո՝ 22.02.2016թ.-ին, Դիմումատուն 15-օրյա ժամկետում բողոքը կրկին ներկայացրել է՝ միջնորդելով հարգելի համարել բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը:

Հանձնաժողովին ուղղված բողոքի ուսումնասիրությամբ պարզվեց նաև, որ ներկայացված բողոքը բավարարում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով սահմանված պահանջները, այսինքն վարչական բողոքը ներկայացնելու՝ օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին դիմումը ենթակա է բավարարման:

<u>Անդրադառնալով բողոքում ներկայացված փաստարկներին, Հանձնաժողովը գտնում է, որ բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ</u>.

Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի օբյեկտիվությունը, լրիվությունը և բազմակողմանիությունը պարզելու նպատակով՝ հարկ է անդրադառնալ Դիմումատուի կողմից ներկայացված բողոքի համար էական հարցադրումներին.

1. Դիմումատուի պնդմամբ՝ <u>հարկային մարմնի աշխատակիցները դուրս են եկել հանձնարարագրով նշված ստուգման շրջանակներից, քանի որ դրանում նշված է եղել միայն ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որի շրջանակներում չպետք է հանվեր Z հաշվետվություն և ուսումնասիրվեր. Արդյունքում խախտվել են «Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի պահանջները: Վերոհիշյալ խախտման արդյունքում պետք է կիրառվի «Օրենքի 18-րդ հոդվածը, համաձայն որի՝ հարկերի հաշվարկման հսկողության և գանձման ընթացքում օրենքի խախտմամբ հարկ վճարողների վերաբերյալ ձեռքբերված տեղեկությունները չեն կարող հիմք հանդիսանալ հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման համար:</u>

Վերոգրյալի կապակցությամբ գտնում ենք, որ բողոքն այդ մասով անհիմն է, քանի որ ստուգումն անհատ ձեռնարկատիրոջ մոտ իրականացվել է **«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգի պահպանմամբ**, մասնավորապես՝ գործի նյութերում առկա է ստուգում իրականացնելու համար տրված պատշաճ հանձնարարագիր, որի մեկ օրինակը տրվել է Դիմումատուին և վերջինիս պարզաբանվել են ստուգման շրջանակներում իր իրավունքները և պարտականությունները, ինչը հավաստված է նաև Դիմումատուի ստորագրությամբ:

Վիճարկվող ստուգման ակտով արձանագրված խախտումը հայտնաբերվել է ստուգման շրջանակներում իրականացված գործողությունների արդյունքում, ինչը հիմնավորվում է գործում առկա ստուգողների կողմից Է. Հովհաննիսյանի մասնակցությամբ 07.09.2015թ. կազմված արձանագրությամբ, որի վրա առկա է Էդվարդ Հովհաննիսյանի ստորագրությունը:

Վերոգրյալից հետևում է, որ դեռևս 07.09.2015թ. դրությամբ հայտնաբերվել և արձանագրվել է հարկային իրավախախտումը, որի կապակցությամբ Դիմումատուի կողմից որևէ առարկություն չի ներկայացվել, որի իրավունքը նախատեսված է նաև Օրենքով:

Անդրադառնալով Դիմումատուի կողմից ներկայացված այն փաստին, որ հարկային մարմնի աշխատակիցները դուրս են եկել ստուգաթերթով սահմանված հարցերի շրջանակից, հետևաբար կիրառման է ենթակա Օրենքի 18-րդ հոդվածը, գտնում ենք այն անհիմն, քանի որ **Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության** համաձայն, **<u>ստուգում իրականացնող անձինք, բացառությամբ հարկային և մաքսային մարմինների</u>**, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող անձինք, **<u>պետք է պատասխանեն բացառապես տվյալ գործունեության համար նախատեսված ստուգաթերթում ընդգրկված հարցերին և ստուգեն դրանք կարգավորող նորմերի կատարման պահանջները</u>**: Օրենքի նշված պահանջից ուղղակիորեն հետևում է, որ բացառապես ստուգաթերթում

ընդգրկված հարցերին պատասխանելու պահանջը կիրառելի չէ հարկային մարմինների նկատմամբ:

2. Դիմումատուն պնդում է նաև, որ **<u>արտոնագրային հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը 19.08.2015թ.-ին ուղարկելը թյուրիմացություն է, քանի որ Դիմումատուն կարծել է, որ օրենքի խախտում չի կատարում այն պատճառով, որ պատշաճ նշել է հարկման ժամանակահատվածը՝ 01.08.2015թ. – 31.08.2015թ., թեպետ հարկային մարմնի կողմից կազմված էլեկտրոնային տարբերակում որպես գործունեության իրականացման սկիզբ նշված է 19.08.2015թ.: Բացի այդ, արտոնագրային վճարը կատարել է մինչև օգոստոս ամիսը՝ 31.07.2015թ.-ին, այսինքն ակնհայտ է եղել տնտեսավարող սուբյեկտի 2015թ. օգոստոս ամսին արտոնագրային վճար վճարող համարվելու պատրաստակամությունը:</u>**

<u>Նշվածի շրջանակներում Դիմումատուն կարծում է, որ խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի պահանջը, իրեն զուտ ձևական առումով ծանրաբեռնել են պարտականությամբ, որը բովանդակային կատարված է եղել</u>:

Հանձնաժողովը գտնում է, որ նշված փաստարկների հիմնավորված լինելը պարզելու նպատակով հարկ է պատասխանել հետևյալ հարցադրումներին.

1) արտոնագրային վճարով հարկվող համարվելու տեսանկյունից բավարա՞ր է արդյոք միայն վճարում կատարելը.

2) հայտարարության ներկայացման պահը ունի՞ իրավական նշանակություն՝ արտոնագրային վճարով հարկվող համարվելու իրավահարաբերության ծագման համար, թե՞ ոչ:

Նշված հարցադրումների պատասխանները ուղղակիորեն բխում են օրենսդրության հետևյալ կարգավորումներից.

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 5-րդ կետի համաձայն, արտոնագրային վճար վճարողները մինչև գործունեություն իրականացնելը, իսկ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան արտոնագիր ունեցող անձինք՝ մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը որևէ ժամանակահատվածի (օրացուցային տարվա ընթացքում ընտրված ցանկացած ամիս կամ հաջորդական ամիսների հանրագումար, բայց ոչ ավելի, քան մինչև

տվյալ օրացուցային տարվա ավարտը) համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն հավելվածի N 1 ձևով սահմանված հայտարարություն: **Նույն հավելվածի 6-րդ կետի** համաձայն, **հայտարարություն ներկայացնելու օրն անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը ստանում է արտոնագիր** սույն հավելվածի N 2 ձևին համապատասխան: Ընդ որում, հայտարարությունը ներկայացնելու օրվա ընթացքում սույն հավելվածի N 2 ձևով արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը **համարվում է տրամադրված հայտարարությունը ներկայացնելու օրը,** եթե անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը, սույն հավելվածի 16-րդ կետին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

Վերոհիշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ արտոնագիր ստացած, հետևաբար նաև դրանից բխող **գործունեություն իրականացնելու իրավունքը ծագած կարող է համարվել հետևյալ իրավաբանական կազմի դեպքում՝**

ա. ներկայացվել է օրենքով սահմանված հայտարարություն.

բ. հայտարարությունը ներկայացնելու օրվա դրությամբ կատարվել է արտոնագրային վճարի վճարում:

Այսինքն, նշված գործողություններից որևէ մեկի բացակայության պարագայում անձը չի կարող համարվել արտոնագիր ստացած, հետևաբար նաև արտոնագրային հարկով հարկվող գործունեություն իրականացնող անձ, որպիսի պարագայում հերքվում է նաև Դիմումատուի կողմից ներկայացված փաստարկը, որ դեռևս 31.07.2015թ. կատարված վճարմամբ ինքը հավաստել է արտոնագրային վճարով գործունեություն իրականացնելու իր մտադրությունը, իսկ հարկային մարմին ներկայացված հայտարարությամբ սահմանել է ժամանակաշրջանը՝ նշելով այն 01.08.2015թ. մինչև 31.08.2015թ.-ը:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ **«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքն** արտոնագրի ստացումը պայմանավորում է ոչ թե հայտարարության մեջ նշված ժամանակահատվածով, այլ հայտարարության ներկայացման օրվա որոշմամբ, որպիսին սույն գործով հանդիսացել է 19.08.2015 թվականը:

Արդյունքում, չի հիմնավորվում նաև Դիմումատուի բողոքը՝ ձևական նկատառումներով պարտականություններով ծանրաբեռնելու վերաբերյալ, քանի որ

հայտարարությունը ներկայացնելը և դրա օրվա որոշումը չեն կարող դիտվել ձևական գործընթաց՝ արտոնագրային վճար վճարելու իրավահարաբերությունների ծագման համար:

3. **<u>Դիմումատուն գտնում է, որ</u> <u>հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հավելվածում ամրագրված «ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները հարկային մարմնին փոստի միջոցով ներկայացնելու» կարգի 7-րդ և 8-րդ կետերի կարգավորումները, հարկային մարմինը ստուգելով հայտարարության մեջ նշված հաշվետու ժամանակաշրջանը, պարտավոր էր տեղեկացնել Է. Հովհաննիսյանին, որ իր ուղարկած փաստաթուղթը ձևական առումով չի համապատասխանում սահմանված կարգին և կամ էլ դրանում, առանց իրեն տեղյակ պահելու փոփոխություն է կատարվել: Հետևաբար, որևէ փաստաթուղթ առկա չէ այն առումով, որ Է. Հովհաննիսյանի ուղարկած փաստաթղթերը համարվել են չներկայացված</u>**:

Նշված դիրքորոշման վերաբերյալ Գանգատարկման հանձնաժողովը պարզաբանել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն, հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները և դրանց (ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք: Հարկային մարմինը պարտավոր չէ տեղեկացնել հարկ վճարողներին թույլ տրված խախտման մասին:

Նշվածի առնչությամբ հարկ է մասնավորապես նշել, որ քննարկվող հայտարարությունն այնուամենայնիվ հիմք է ընդունվել Դիմումատուին արտոնագիր տալու համար՝ այսինքն վերջինիս ուղարկած փաստաթուղթը ձևական առումով համապատասխանել է սահմանված կարգին, սակայն դրա գործողությունը տարածվել է 19.08.2015թ.-ից հետո ընկած ժամանակահատվածի համար, որպիսի պարագայում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հավելվածի 7-րդ և 8-րդ կետերի խախտման վերաբերյալ Դիմումատուի դիրքորոշումը ևս անհիմն է:

<u>**4. Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ նաև Դիմումատուի պնդմանն առ այն, որ խախտվել են Օրենքի 6-րդ հոդվածի պահանջները՝**</u>

կապված ակտի կազմման ժամանակի հետ, որը պետք է կազմվեր ոչ թե 02.10.2015թ.-ին, այլ 05.10.2015թ.-ին՝ հաշվի առնելով փոստի միջոցով առարկությունները ուղարկելու և այն ուշ ստանալու հնարավորությունը, **ինչպես նաև այն հանգամանքին, որ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետք դրսևորել է անգործություն:**

Նշված դիրքորոշման առնչությամբ Հանձնաժողովը գտնում է, որ Դիմումատուի փաստարկները հերքվում են **Օրենքի 6-րդ հոդվածի կարգավորումներով և սույն գործով հաստատված հետևյալ փաստական հանգամանքներով.**

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ստուգում իրականացնող անձը ակտի նախագիծը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը:

Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Քննարկվող գործի փաստական հանգամանքներով հաստատված է, որ Դիմումատուն 25.09.2015թ. ստացել է ստուգման ակտի նախագիծը, իսկ ստուգման ակտը ստորագրվել է 02.10.2015թ.-ին, այսինքն՝ այն օրը, երբ Դիմումատուի առարկությունները ստացվել են հարկային մարմին: Նշվածի կապակցությամբ Հանձնաժողովը գտնում է, որ որևէ խախտում առկա չէ, քանի որ Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն, տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու դեպքում ստուգող մարմինը ուսումնասիրում է դրանք և առարկություններ ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ակտի մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող

պաշտոնատար անձի կողմից, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ստորագրմանը: Այսինքն, հարկային մարմինը, օրենքի վերոհիշյալ պահանջին համահունչ, ստանալով առարկությունները կազմել է ակտը և այն ներկայացրել է տնտեսավարող սուբյեկտին, ով ստացել է այն 06.10.2015թ.-ին: Ավելին, տնտեսավարողի կողմից ներկայացված առարկությունները քննարկվող նորմի ուժով կցված է ակտին և ներկայացվել է ինչպես Գանգատարկման հանձնաժողովին, այնպես էլ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովին, որպիսի պարագայում տնտեսավարողի որևէ իրավունք՝ ներառյալ ակտը բողոքարկելու իրավունքը չի խախտվել և վերջինս օրենքով սահմանված կարգով իրացրել է նշված իրավունքը:

Արդյունքում, Դիմումատուի բողոքն առ այն, որ ՀՀ ՖՆ եղեգնաձորի ՏՀՏ պետի կողմից դրսևորվել է անգործություն, ևս անհիմն է:

<u>5. Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ նաև Դիմումատուի պնդմանն առ այն, որ Գանգատարկման հանձնաժողովը չի անդրադարձել հարկային մարմնի աշխատակիցների ձեռքով տեղեկատվություն ավելացնելու հանգամանքին</u>:

Թեպետ Դիմումատուի նշված դիրքորոշումը որևէ կերպ չի ազդում ստուգման ակտի և դրանով առաջացած պարտավորությունների իրավաչափությանը, այնուամենայնիվ հարկ է նշել, որ ստուգման ակտում նշված տեղեկատվությունը, համաձայն որի՝ ստուգվողը հրաժարվել է ծանոթանալ Ակտի նախագծին և այն ստորագրելուց՝ նշելով շարժառիթները, լիովին կարող է արտացոլել փաստացի գործընթացը՝ կապված ակտի նախագիծը ստուգվողին առձեռն ներկայացնելու հետ, որից ելնելով էլ Ակտի նախագիծն այնուհետև ուղարկվել է փոստով, ինչը հաստատված է սույն գործի փաստական հանգամանքներով: Հարկ է նաև նշել, որ տվյալ գրառման արդյունքում Դիմումատուն չի զրկվել Ակտի նախագծին ծանոթանալու և իր առարկությունները ներկայացնելու հնարավորությունից, այսինքն վիճարկվող գրառումը որևէ կերպ չի ազդել Դիմումատուի իրավունքների իրականացման վրա:

6. Ի վերջո, անդրադառնալով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 26.10.2015թ. թիվ 297436/05 որոշումն առանց քննության թողնելու վերաբերյալ Գանգատարկման

հանձնաժողովի որոշմանը, գտնում ենք, որ այն իրավաչափ է և բխում է ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 288-րդ հոդվածի պահանջից:

Մասնավորապես, օրենսգրքի գործող խմբագրությամբ 288-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ընդունելու օրվանից հետո՝ տաս օրվա ընթացքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիմումատուի կողմից վիճարկվող վարչական ակտի դեմ բողոքը ներկայացվել է նշված ժամկետի խախտմամբ, Գանգատարկման հանձնաժողովն իրավաչափ կերպով թողել է այն առանց քննության:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիմումատուի կողմից նշված ակտը չեղարկելը ներկայացվել է որպես ստուգման ակտի անվավերության հետևանք, Հանձնաժողովը գտնում է, որ նշված պահանջը ենթակա չէ բավարարման, քանի որ ստուգման ակտը կայացվել է օրենքի պահանջներին համապատասխան:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ և 73-րդ հոդվածների, 76-րդ հոդվածի 4-րդ մասի և 1-ին մասի «բ» կետի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Անհատ ձեռնարկատեր Էդվարդ Հովհաննիսյանի դիմումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 15-ի թիվ 54/2 որոշման դեմ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասով, բավարարել և ժամկետը վերականգնել:

2. Անհատ ձեռնարկատեր Էդվարդ Հովհաննիսյանի բողոքը՝ ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 15.12.2015թ.-ի թիվ 54/2 որոշումը բեկանելու, հարկային տեսուչներ Արմեն Սաֆարյանի, Մանվել Ստեփանյանի և Գրիգոր Սահակյանի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության պետ Ռ. Գևորգյանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, ՀՀ ֆինանսների նախարարության Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության թիվ 6104898 ակտը, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության՝ վարչական պատասխա-

նատվության ենթարկելու վերաբերյալ 26.10.2015թ. թիվ 297436/05 որոշումը չեղյալ համարելու պահանջների մասով, մերժել:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ